

ԴԱՍ 2. ԳԼՈՒԽ 1

Գլուխ 1-ի ուրվագիծ Outline of Chapter 1

հհ. 1-3 — Ներածություն

հհ. 4-11 — Ողջույն և պատճառը

հհ. 12-18 — Հարուցյալ Քրիստոսի տեսիլքը

հ. 19 — Գրքի ուրվագիծը

հ. 20 — Նախապատրաստություն 2 և 3 գլուխների համար

հհ. 1-3 – Ներածություն

1) Հիսուս Քրիստոսի հայտնությունը, որ Աստված Նրան տվեց ցույց տալու համար Իր ծառաներին այն բաները, որոնք շուտով պիտի պատահեն, և Իր հրեշտակի միջոցով ուղարկելով՝ **հայտնի դարձրեց** Իր Հովհաննես ծառային.

Հայտնությունը = «Ապոկալիպսիս» = Քողազրկել (18 X ՆԿ) (Նշում. եզակի, ոչ հոգնակի):

Ումից. «Հիսուս Քրիստոսի, որ Աստված Նրան տվեց»: Որդին կարո՞ղ է սովորել: Կարո՞ղ է Հայրը հայտնել Որդուն: (Ղուկ. 2:52, Մարկ. 13:32, Գործք 1:6,7):

«**ծառաներ**» = դուլոս. նվիրյալ, կապյալ ստրուկներ (Ել. 21:6 , Բ Օր. 15:17)

«**ցույց տալ**» = սա կնքված գիրք չէ (Հայտ. 22:10): Այն պետք է հասկանալի լինի, ի հակադրություն Դանիելի և այլն, (Դան. 12:4): Սա «երազային» մի բան չէ. այն իրական և շոշափելի է:

Դան. 12:4 - Եւ դու, ով Դանիել, փակիր այս խօսքերը եւ կնքիր գիրքը մինչեւ վերջի ժամանակը. շատերը պիտի քննեն, եւ գիտութիւնը պիտի շատանա:

Չայ. 22:10 - Եւ ասեց ինձ. Մի կնքիր այս գրքի մարգարեութեան խօսքերը. որովհետեւ ժամանակը մօտ է:

«**շուտով**» = en taxi. արագ կատարվող (տախտմետր՝ արագաչափ): «Պիտի սկսեմ ու պիտի վերջացնեմ» (Ա Թագ. 3:12, Ղուկ. 18:8):

Ղուկ. 18:8 - Սակայն մարդի Որդին գալիս՝ արդեօք հաւատք կ'գտնե՞րկրի վրա:

«**հայտնի դարձնել**» = նշանների, խորհրդապատկերների միջոցով (կողեր): Իրականությունը խորհրդապատկերներով. «Ո՛չ մի մարգարեություն իր ծածուկ մեկնությունը չունի» (Բ Պետ. 1:20):

1 Պետ. 1:20 - Որ առաջուց ճանաչուած էր աշխարհքի սկզբիցն առաջ, բայց ժամանակների վերջումն երեւեցաւ ձեզ համար,

«**հրեշտակ**» = angelo՝ պատգամաբեր

2) **Որ և վկայեց** Աստծո Խոսքը և Հիսուս Քրիստոսի վկայությունը և այն բոլոր բաների մասին, ինչ տեսավ:

«**որ և վկայեց**» (90 X Հովհաննեսի գրվածքներում): Նա խոսում է այն ժամանակի մասին, որտեղ մենք ենք, ետ նայելով...

Եզակի խոստում A Unique Promise

3) Երանի նրան, ով **կարդում է** ու նրանց, ովքեր **լսում են** այս մարգարեության խօսքերը և **պահում են** այն ամենը, ինչ սրանում գրված է, քանի որ մոտ է ժամանակը:

«Կարդալ... լսել... պահել». սա միակ գիրքն է, որ հատուկ օրհնություն ունի, եթե դուք այս երեք բաներն անեք:

4) Հովհաննեսից՝ այն յոթ եկեղեցիներին, որ գտնվում են Ասիայում, շնո՛րհ և խաղաղությու՛ն ձեզ Նրանից, **Որ է, Որ էր, և Որ** պիտի գա, ու յոթ Հոգիներից, որ Նրա աթոռի առջև են:

«Հովհաննես». ոչ մի տիտղոս: Այս եկեղեցիները նրան լավ էին ճանաչում:

Շնորհ (Charis). հունական ընդունված ողջույնի ձև: Այստեղ, խորը աստվածաբանական տերմին է:

Խաղաղություն (Shalom). (Աստծո: Խորը խնդիրը՝ լուծված):

5) Եվ Հիսուս Քրիստոս հավատարիմ վկայի (Greek-martus, English martyr) կողմից, որ **մահացածներից անդրանիկն է** ու երկրի թագավորների իշխանը: Նրան, որ մեզ սիրեց ու Իր արյունով մեզ մեր մեղքերից լվաց:

Կող. 1:15,18 - ¹⁵ Որ աներեւոյթ Աստուծոյ պատկերն է՝ ամեն ստեղծուածներից առաջ ծնուած: The Son is the image of the invisible God, the firstborn over all creation.

18 Եւ նա է մարմնի այսինքն եկեղեցու գլուխը, որ նա է սկիզբը, մեռելների անդրանիկը. որպէսզի ամեն բանի մէջ նա լինի առաջինը:

Եբր. 1:8-9 - ⁸ Բայց Որդուն ասում է, Քո աթոռն, ով Աստուած, մինչեւ յաւիտեանս յաւիտենից է. քո թագաւորութեան գաւազանը ուղիղ գաւազան է: ⁹ Սիրեցիր արդարութիւնը եւ ատեցիր անօրէնութիւնը. սորա համար օծեց քեզ, ով Աստուած, քո Աստուածը ուրախութեան իւղով աւելի քան թէ քո ընկերներին:

6) Եվ մեզ **թագավորներ** ու **քահանաներ** դարձրեց Աստծո և Իր Հոր համար, փա՛ռք և գոբություն՝ ն Նրան հավիտյանս հավիտենից: Ամեն:

«Թագավորներ և քահանաներ». այս պաշտոնի հսկայական կարևորությունը կերևա 4 և 5 գլուխներում:

7) Ահա, Նա գալիս է ամպերով, ու **ամեն աչք տեսնելու է Նրան**, նաև նրանք, որ խոցեցին Նրան. և երկրի բոլոր ազգերը ողբալու են Նրա պատճառով: Այո՛, թող այդպես լինի: Ամեն:

«Ամեն աչք տեսնելու է Նրան». անձնապես, ֆիզիկապես (Դան. 7:13, Մաթ. 26:64, Մաթ. 24:30), «խոցեցին Նրան» (Զաք. 12:10):

- **Սա վերաբերվում է Նրա երկրորդ գալստյանը, ոչ թե հափշտակությանը:** Եթե Քրիստոսն այդ ժամանակ գալու լիներ երկրի վրա, հափշտակվելու կարիք չէր լինի: Հափշտակությունը մինչ այդ արդեն տեղի է ունեցել:
- Լինելու է

Մատ. 26:64 - 64 Յիսուսն էլ նորան ասեց. Դու ասեցիր. սակայն ասում եմ ձեզ, որ հիմակուց հետո կտեսնեք մարդի Որդին Զօրութեան աջ կողմը նստած՝ եւ երկնքի ամպերի վերա գալիս:

Դան. 7:13 - 13 Եւ տեսնում էի գիշերուա տեսիլքներում, եւ ահա երկնքի ամպերով գալիս էր մարդի որդիի նման, եւ մինչեւ Հինաւուրցը եկաւ, եւ նորա առաջին մօտեցրին նորան:

Զաք. 12:10 - 10 Եւ պիտի թափեմ Դաւիթի տան վրա, եւ Երուսաղէմում բնակողի վրա շնորհքի եւ աղօթքի հոգին. Եւ նորանք պիտի մտիկ տան ինձ, որին խոցեցին. Եւ սուգ պիտի անեն նորա վրա միամօրի սուգի պէս. Եւ պիտի ցավան նորա վրա, ինչպէս որ անդրանկի վրա կցավեն:

8) «Ես եմ Ալֆան ու Օմեգան, Սկիզբը և Ավարտը», ասում է Տերը, **որ էր, որ է և որ պիտի գա՝** Ամենակալը:

9) Ես՝ Հովհաննէսս, որ նույնպէս ձեր եղբայրն եմ և Հիսուս Քրիստոսի նեղության, արքայության և համբերության ընկերակիցը, Պատմոս կոչվող կղզում էի՝ Աստծո Խոսքի ու Հիսուս Քրիստոսի վկայության համար:

«Հովհաննէս» անունը հատուկ նշված է հինգ անգամ. 1:1,4,9, 21:2, 22:8:

«նեղության ընկերակից». Դոմետիանոսի թագավորության օրոք:
Հովհաննէսն արքայություն է Ք.Հ. 86-96թթ.-ը:

10) Եվ **Տիրոջ օրը** Հոգու մեջ էի, և ետևիցս մի գորեղ ձայն **լսեցի՝** փողի ձայնի պէս:

«Տիրոջ Օրը». վախճանաբանության մեջ առանցքային տերմին է:

Կիրակի = «Տիրոջ օր»:

Sunday = “Lord’s Day”?

- Յոթերորդ օրն առանցնացվեց Եղեմում — Ծննդ. 2
- Այն պահում էին նախքան Օրենքը տրվելը
 - Շաբաթ օրը մանանա մի՛ հավաքիր — Ել. 16
 - Օրենքը տրվեց Սինա լեռան մոտ — Ել. 20

- Հակաքրիստոսը կփորձի «փոխել ժամանակներն ու օրերները» — Դան. 7:25

Դան. 7:25 - 25 Եւ Բարձրեալի դէմ խօսքեր է խօսելու եւ Բարձրեալի սուրբերին հարստահարելու է, եւ խորհելու է որ ժամանակներն ու օրերները փոխէ, եւ նորանք պիտի նորա ձեռքը տրուին մինչեւ մի ժամանակ եւ (երկու) ժամանակներ եւ կէս ժամանակ:

Ժամանակ եւ (երկու) ժամանակներ եւ կէս ժամանակ—մէկ տարի երկու տարի... կէս տարի. 1260 օրեր (Հայտ. 12:6, 14), 42 ամիս (Հայտ. 11:2,3):

time ... times and ... dividing of time—one year, two years, and half a year 1260 days (Re 12:6, 14); forty-two months (Re 11:2, 3).

- «Մի՛ տեղաշարժիր հին սահմանի նշանը...» — Առ. 22:28
- Հազարամիայի ժամանակ Տաճարը բաց կլինի միայն շաբաթ օրը և ամսագլխին (new moon) — Եզեկ. 46:1

Այսուհետև թող ոչ ոք չդատի ձեզ ուտելու և խմելու համար, կամ տոների, ամսագլուխների և շաբաթների համար. որոնք գալիք բաների ստվերն են, բայց մարմինը Քրիստոսինն է:

Կողոսացիներին 2:16-17

«Յոգու մեջ էի,,»

“I Was in the Spirit...”

- «Տիրոջ օրը» (Պատմություն) — 1:10
- Երկնային գահի առաջ — 4:2
- Տարված անապատ — 17:3
- Տարված սարի վրա — 21:10

Յուրաքանչյուր քրիստոնյա ապրում է երկու վայրերում.

անհավասարակշռությունը կարող է տանել կամ **միսսոցիզմի**

(խորհրդապաշտության) կամ մատերիալիզմի (նյութապաշտության):

«**լսեցի**». «շրջվեցի» (h.10-?, 12), տեսա (h.12), «Նրա ոտքն ընկա» (h.17):

11) որ ասում էր. «Ես եմ Ալֆան և Օմեգան, Առաջինը և Վերջինը. և ինչ որ տեսնում ես, գրի՛ր մի գրքի մեջ և ուղարկի՛ր յոթ եկեղեցիներին, որ գտնվում են Ասիայում՝ Եփեսոսին, Չմյուռնիային, Պերգամոնին, Թիվատիրին, Սարդիկեին, Ֆիլադելֆիային և Լավոդիկիային:

Ինչու՞ այս յոթ եկեղեցիները: Հոգեգալստից 63 տարի անց 100-ից ավելի եկեղեցիներ կային: Ինչու՞ ոչ Հռոմը, Երուսաղեմը, Անտիոքը, Կոդոսան, Փիլիպպեն, Գաղատիան, Իկոնիան, Լյուստրան, Դերբեն, և այլն:

Հարուցյալ Քրիստոսի տեսիլքը (հհ.12-18) **Vision of the Risen Christ (vv. 12-18)**

12) Եվ շրջվեցի այն ձայնի կողմը, որ խոսում էր ինձ հետ, ու երբ շրջվեցի, յոթ ոսկե աշտանակներ տեսա:

Lampstands (not “candlesticks”) = luchina: lightbearers

Աշտանակներ (ոչ թե «մոմակալներ») = luchina. լուսատուներ (Ել. 25:31-40): «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. 8:12, 9:5), «Դուք եք...» (Մաթ. 5:14, Փիլիպ. 2:15,16):

- Յուրաքանչյուր տեղական եկեղեցի Աստծո լույսը կրողն է այս խավար աշխարհում (Դան. 7:9-14):
- Այս տեսարանը մեզ պետք է հիշեցնի խորանը: Միայն քահանայապետն ուներ աշտանակի հանդեպ իրավասություն: Նա վառում էր ճրագները, ուղղում էր պատրույգը, լցնում էր յուղը: Եթե դրանցից մեկը լավ չէր վառվում, Նա միայն իրավունք ուներ այն հանգցնելու (Հովհ. 15:1, Հովհ. 5:16): Ես և դու կարող ենք մի կողմ դրվել:

13) Եվ յոթ աշտանակների մեջտեղում՝ մեկին, որ նման էր Մարդու Որդուն՝ մինչև ոտքերը երկար **պատմուճան հագած** և կրծքի վրա ոսկե գոտի կապած:

«**մեջտեղում**» = որտե՞ղ է Նա հենց հիմա: «**Մարդու Որդի**». 85 X

Ավետարաններում (83 X Քրիստոսն Իր մասին), Սաղմ. 8:4, Հայտ. 14:14:

Փիլիպ. 2:7 - 7 Այլ իր անձն ունայնացրեց, եւ ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով եւ կերպարանքով մարդի պէս գտնուելով.

Չռ. 8:3 - 3 ...Աստուած իր Որդին ուղարկելով մեղքի մարմնի նմանութիւնովը եւ մեղքի համար՝ մեղքին դատապարտեց այն մարմնումը.

Եբր. 2:17 - 17 Ուստի պէտք էր նորան որ բոլորովին եղբայրներին նմանուի

Չիսուսի հանձնարարությունները.

Jesus' tasks:

Բարեխոսություն — Եբր. 7:25

Մաքրում և սրբում է մեզ — Ա Հովհ. 1:9

Դատապաշտպան (Բարեխոս) — Ա Հովհ. 2:1

Հետախուզություն — Հայտ. 2 և 3 (հիմնականում մերժված է եկեղեցու կողմից)

Չագուստներ.

Garments:

(մեր) Դաշտանի լաթ — Ես. 64:6

(Նրա)Լույսի հանդերձներ — Սաղմ. 104:12-?, 2

Եւ արդարութիւնը նորա մէջքի գօտին կլինի — Ես. 11:5

Եւ իր վրա հանդերձ էր հագած արիւնով ներկուած, եւ նորա անունն կոչվում է Աստուծոյ Բան: — Հայտ. 19:13, Ես. 63

Հետևյալ ֆիզիկական նկարագրությունը հիշեցնում է Մաթ. 17-ի (Այլակերպություն) և Դան. 7-ի (Հինավուրցը) նկարագրությանը:

14) Նրա գլուխն ու մազերը՝ բրդի պէս էին ու ճերմակ՝ ձյան պէս, և Նրա աչքերը՝ կրակի բոցի պէս:

1) Մազեր, գլուխ, բուրդ, ձյուն – Դան. 7:9,13,22

Դան. 7:9 - Ես տեսնում էի մինչեւ որ աթոռներ դրուեցան, եւ՝ Հինաւուրցը նստեց. նորա հագուստը՝ ձիւնի պէս սպիտակ, եւ նորա գլխի մազը՝ մաքուր ասրի պէս. նորա աթոռը կրակի բոց,

նորա անիւները վառուած կրակ:

2) Աչքեր. կրակի բոց.

- ամեն բան մերկ է Նրա առջև — Եբր. 4:13

Եւ չկա մի արարած աներեւոյթ նորա երեսից. բայց ամենն էլ մերկ եւ բաց է նորա աչքերի առաջին որի հետ է մեր բանը:

- կրակով փորձված գործ — Ա Կորն. 3:13

Ամեն մէկի գործը պիտի յայտնուի. որ օրը կերեւեցնէ. որովհետեւ կրակով պիտի յայտնուի. եւ ամեն մէկի գործը թէ ինչպէս է, կրակը կ'փորձէ:

15) Եվ Նրա ոտքերը՝ **ոսկեպղնձի նման**, որ կարծես հնոցի մեջ վառվել էին, և Նրա **ձայնը** նման էր շատ ջրերի ձայնին:

3) Ոտքեր. քայլելու խորհրդապատկերը

Պղինձ. դատաստան (Պղնձե օձը, Թվ. 21)

«Տերը ժողովրդի վրա կիզիչ օձեր ուղարկեց, և խայթեցին ժողովրդին, այնպէս որ Իսրայելից շատ մարդ մեռավ: Ուստի ժողովուրդը եկավ Մովսեսի մոտ ու ասացին. «Մենք մեղանչեցինք Տիրոջ դեմ ու քո դեմ խոսելով. աղոթի՛ր Տիրոջը, որ մեր միջից հեռացնի օձերին»: Եվ Մովսեսն աղոթեց ժողովրդի համր: Տերն ասաց Մովսեսին. «Քեզ համար մի կիզիչ օձ շինիր և դրան դի՛ր ձողի վրա, և կլինի այնպէս, որ խայթվածներից նա, ով դրան նայի, կապրի»: Մովսեսը մի պղնձե օձ շինեց և այն ամրացրեց ձողի վրա, և եղավ, որ երբ օձը մեկին խայթում էր, երբ նա նայում էր պղնձե օձին, ապրում էր»:

Թվոց 21:6-9

«**կրակե**» = «պղնձե»: Ոչ մի իմաստ չէր կրում նախքան Հիսուսը բացատրում է Նիկողեմիսին...

«Եվ ինչպէս Մովսեսն անապատի մեջ օձը բարձրացրեց, այդպէ՛ս էլ Մարդու Որդին պետք է բարձրացվի, որպէսզի ո՛վ Նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

(Մա հիմք է դնում ողջ Աստվածաշնչի ամենասիրված համարի համար...):

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:

Հովհ. 3:16

«Եվ Ես թշնամություն եմ դնելու քո և կնոջ միջև և քո սերնդի ու նրա սերնդի միջև. նա քո գլուխն է ջախջախելու, իսկ դու նրա գարշապարն ես ճզմելու»:

Ծննդ. 3:15

4) Ձայն, շար ջրեր

Եզեկ. 43:2, - Եւ ահա Իսրայէլի Աստուծո փառքը գալիս էր արեւելքի ճանապարհից, եւ նորա ձայնը շատ ջրերի ձայնի նման էր, եւ երկիրը լուսավորուեց նորա փառքիցը:

16) Եվ իր աջ ձեռքում յոթ աստղեր ուներ, ու Նրա բերանից մի **սրված երկսայր սուր էր** դուրս գալիս, և Նրա դեմքն արևի էր նման, որ փայլում էր իր սեփական զորությամբ:

5) Աջ ձեռք՝ - յոթ աստղեր,

աշտանակներ — մեջտեղում, Իր ձեռքում

6) Բերան. երկսայրի սուր. — Եբր. 4:12, Եփ. 6:17, Ես. 49:2

«...երկսայրի սուր».

«Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է ու զորավոր, և ամեն մի երկսայրի սրից ավելի կտրուկ, որ թափանցում է մինչև անձի ու հոգու, հոդերի ու ողնաձուծի բաժանման սահմանը, և մտքերի ու սրտի խորհուրդների զննողն է»:

Եբր. 4:12

«Եվ վերցրեք փրկության սաղավարտը և Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է»:

Եփ. 6:17

«Էքսպոզիցիոնալ կայունության սկզբունքը»...

“The Principle of Expository Constancy” ...

7) Դեմքի արտահայտությունը, արև - Մաթ. 17

«... Նրա դեմքը արևի էր նման...».

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, այստեղ կանգնածների մեջ կլինեն նմանք, որոնք պիտի չառնեն մահվան համը, մինչև որ տեսնեն մարդու Որդուն՝ Իր թագավորությամբ գալիս: Եվ վեց օրից հետո Հիսուսն Իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին ու նրա եղբայր Հովհաննեսին ու նրանց առանձին մի բարձր լեռ հանեց: Եվ նրանց առջև կերպարանափոխվեց, ու Նրա դեմքը փայլեց **ինչպես արեգակը**, և Նրա զգեստները լույսի պես ճերմակեցին»:

Մաթ. 16:28-17:2

17) Եվ երբ Նրան տեսա՝ Նրա ոտքն ընկա մեռելի պես, ու Նա Իր աջ ձեռքը դրեց վրաս ու ասաց ինձ. «Մի վախեցիր, Ես եմ **Առաջինը և Վերջինը**».

17) «Առաջինը և Վերջինը»

“First and the Last”

- Եսայի 41:4
- Եսայի 44:6
- Եսայի 48:12
- Հայտնություն 1:11
- Հայտնություն 1:17-18
- Հայտնություն 2:8 «**մեռած էր, և ահա, կենդանի է**»
- Հայտնություն 22:13

Աստվածային ուրվագիծ. Հայտնություն 1:19

The Divine Outline: Revelation 1:19

18) Եւ կենդանին. եւ ես մեռած էի, եւ ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից, ամէն. եւ ունիմ դժոխքի եւ մահի բանալիները:

Եփ. 4:8-10 - 8 Սորա համար ասում է. Թե՛ Վեր ելաւ բարձրը, գերի առավ գերութիւնը. եւ մարդկանց պարգեւներ տուաւ: 9 Այն վեր ելաւ ի՞նչ է, եթէ ոչ՝ որ առաջ վայր իջաւ երկրի ցած կողմերը: 10 Այն վայր իջնողը նոյն ինքն է, որ ամեն երկինքներիցն աւելի բարձր վեր ելաւ, որ ամենը լրացնէ:

19) «Գրի՛ր, ինչ որ տեսնում ես, (Քրիստոսի տեսիլքը, գլուխ 1), այն, որ կա (յոթ եկեղեցիները, գլուխներ 2,3), և այն, որ հետո է լինելու (Այն, որ եկեղեցիներից հետո է գալիս, գլուխներ 4-22)»:

«...հետո», «այս բաներից հետո» = meta tauta.

20) Յոթ աստղերի խորհուրդը, որ Իմ աջ ձեռքում տեսնում ես և յոթ ոսկեղեն աշտանակները: Յոթ աստղերը յոթ եկեղեցիների հրեշտակներն են, իսկ յոթ աշտանակները, որ դու տեսնում ես, յոթ եկեղեցիներն են:

Յոթ եկեղեցիները. «այն, որ կա»

Ինչու՞ այս յոթը: Ինչու՞ ոչ Երուսաղեմը, Անտիոքը, Հռոմը, Լյուստրան, Իկոնիան և այլն... («Նա, ով ականջ ունի...» 7 X այլ տեղերում):

- 1) **Տեղական. իրական եկեղեցիներ:** Հնաբանական հետազոտության է ենթարկվել Սըր Վմ. Բամսի կողմից...
- 2) **Խրատական.** «Եկեղեցիներ»՝ բոլորը: Ուղերձներից յուրաքանչյուրը, որոշակի իմաստով, ուղղված է որևէ եկեղեցու:
- 3) **Չոմելետիկ** (քարոզչական). «Նա, ով ականջ ունի...»: Վերաբերվում է մեզ:
- 4) **Մարգարեական.** իրենց հատուկ հերթականությամբ, դրանք ներկայացնում են եկեղեցու պատմությունը: (Դրանք լրացնում են Դանիել 9:26-ի և Հայտ. 12:5,6 (և այլն) միջև եղած բացվածքը):

Յոթ բնորոշիչ տարրեր յուրաքանչյուր նամակում **Seven Design Elements In Each of the Letters**

- Եկեղեցու անունը
- Քրիստոսի տիտղոսներից մեկը
- Գովասանք
- Հորդորանք
- Անհանգստություն
- Քաջալերանք
- Հաղթության խոստում

Հավանական տնային աշխատանք **Anticipatory Homework**

- 1) Եփեսոս — Գործք 18-20, Եփ. 3, 5
- 2) Զմյուռնա — Գործք 15
- 3) Պերգամոն — Թվ. 22-24. Բաղասամ, Թվ. 33, Գործք 15, Ա Կորն. 6
- 4) Թիվատիր — Գ Թագ. 16, 21. Հեզարել: Նաբովթի այգին. Դ Թագ. 9:36
- 5) Սարդիկե — Գաղատացիներին, Հռոմեացիներին
- 6) Ֆիլադելֆիա — Թեսաղոնիկեցիներին
- 7) Լավոդիկիա — Կողոսացիներին

Հաջորդ դասի համար **For the Next Session**

- Կարդացե՛ք ամբողջ գիրքը
- Մանրամասն ուսումնասիրե՛ք գլուխ 2-ը և 3-ը (Ուրվագծե՛ք գլուխ 2:1-7)
- Կարդացե՛ք Գործք 20:16-38, և Պողոսի Թուղթը Եփեսացիներին: